600.0421.20.09.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2017 թվականի №421Ա

քաղ. Երևան

«ՌՈԲԵՐՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի №611Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2008 թվականի նոյեմբերի 12-ի «ՌՈԲԵՐՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №611Ա որոշմամբ «ՌՈԲԵՐՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) տրամադրվել է ռադիոհաճախականությունների օգտագործման №0470 թույլտվությունը,

բ) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2017 թվականի օգոստոսի 23-ի №03/11.1/15614-17 գրությամբ Հանձնաժողովը տեղեկացվել է ընկերությանը պատկանող բազային ռադիոկայանի տեղափոխման վերաբերյալ,

գ) Հանձնաժողովը 2017 թվականի օգոստոսի 25-ին վարչական վարույթ է հարուցել ընկերության նկատմամբ՝ ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության պայմաններով նախատեսված բազային ռադիոկայանի տեղադրման վայրի փոփոխության փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 25-ի №ԱԲ-2246Հ գրությամբ,

դ) ընկերությունը 2017 թվականի սեպտեմբերի 8-ին և 12-ին դիմել է Հանձնաժողով՝ հայտնելով, որ դադարեցրել է առանց թույլտվության տեղափոխած բազային ռադիոկայանի աշխատանքը՝ միաժամանակ խնդրելով փոփոխություն կատարել ընկերությանը տրամադրված ռադիոհաճախականության օգտագործման №0470

թույլտվության պայմաններում,

ե) վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ ընկերության կողմից վերացվել է ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության պայմանների խախտումը, և

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել ընկերության նկատմամբ ռադիոհաճախականության օգտագործման №0470 թույլտվության պայմանների խախտման համար 2017 թվականի օգոստոսի 25-ին հարուցված վարչական վարույթը:
2. Հանձնաժողովի 2008 թվականի նոյեմբերի 12-ի «ՌՈԲԵՐՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №611Ա որոշմամբ հաստատված ռադիոհաճախականության օգտագործման №0470 թույլտվության պայմանների 3.1 կետի 2-րդ, 4-րդ և 10-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «2) բազային ռադիոկայանի տեղադրման վայրը՝ քաղաք Երևան, Մ. Խորենացու 112/4.».

   «4) բազային ռադիոկայանի տեղադրման վայրի աշխարհագրական կոորդի-նատները՝ 44E 31′ 2″, 40N 9′ 38″.».

   «10) անտենայի բարձրությունը երկրի մակերեսից՝ 35 մետր.»:
3. Ընդունել ի գիտություն, որ ընկերությունն իրավասու է՝
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ **Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

ք. Երևան
20 սեպտեմբերի 2017թ.